Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 01.03.2022թվականի <<2022 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 36-Ն որոշմանը կից թիվ 1, 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին>> որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2022 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխությունները պայմանավորված է բյուջեի տարեկան առաջադրանքների մասին բաժիններից զեկուցագրերով ներկայացված առաջարկությունները և իրականացվող ծրագրերը ֆինանսական միջոցներով ապահովելու անհրաժեշտությյունը:

2. Առկա խնդիրների նկարագրությունը.

Համայնքի 2022 թվականի հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի բյուջեում նախատեսված պլանային ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ գույքահարկի բազային ցուցանիշներում ներառված են եղել նաև օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորություններից ազատված գույքերը, որոնք ներառվել են բյուջեի եկամուտներում և զգալիորեն մեծացնում են գույքահարկի տարեկան առաջադրանքը:

Մասիս համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաներին ծառայությունների մատուցման համար փոխհատուցման վճարի առաջադրանքը բյուջեում նախատեսված է եղել յուրաքանչյուր երեխայի միջինացված 200 երեխա/օր հաճախումների հաշվարկով, սակայն համայնքի որոշ մանկապարտեզներ տարեսկզբի ձմեռային ամիսներին ջեռուցման բացակայության և մինչև գյուղապետարանների միավորումը ֆինանսական միջոցներ չունենալու պատճառներով չեն աշխատել, ինչպես նաև ս/թ օգոստոս ամսին գյուղերի բոլոր մանկապարտեզները գտնվել են արձակուրդում, որի հետևանքով նախատեսված երեխա/օրերին համապատասխան նախատեսված ցուցնիշի կատարումը դարձել է անհնար:

Համայնքում աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու, անցկացնելու համար նախատեսված 13,0 մլն տեղական վճարների մասով առաջադրանքը հնարավոր չի եղել կատարելու, տարվա ընթացքում աճուրդներին և մրցույթներին քիչ մասնակիցներ ունենալու հետևանքով:

Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային առաջադրանքները կարգավորելու նպատակով առաջարկվում է նվազեցնել բյուջեի եկամուտները.

1.Գյուղ նշանակության հողի հարկը՝ 5,0 մլն դրամ
2.Ոչ գյուղ նշանակության հողի հարկը՝ 15,0 մլն դրամ
3.Անշարժ գույքի հարկը իրավաբանական անձանցից՝ 40,0մլն դրամ
4.Անշարժ գույքի հարկը ֆիզիկական անձանցից՝ 30,0 մլն դրամ
5.Տեղական վճարները մրցույթ և աճուրդ կազմակերպելու համար՝ 11,0 մլն դրամ
6. փոխադրամիջոցներից գույքահարկ ֆիզիկական անձանցից 130,0 մլն դրամ
7.Մանկապարտեզների կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները՝ 30,0 մլն դրամ:

Կառավարության 15/07/2021 թվականի թիվ 1169-Ն որոշման համաձայն՝ համայնքի մանկապարտեզներ հաճախող սոցիալական կրթության որոշ խմբի 6 երեխաների կրթության ապահովման համար հատկացվել է ընթացիկ դրամաշնորհ՝ 851,4 հազար դրամ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գործառական դասակարգման հատուկ նպատակային նյութեր հոդվածը անհրաժեշտ է ավելացնել 3135,0 հազար դրամով:

Օրենսդիր և գործադիր մարմիններ գործառական դասակարգման փոստային ծառայություններ հոդվածը անհրաժեշտ է ավելացնել 600,0 հազար դրամով:

Սոցիալական հատուկ արտոնություններ գորառական դասակարգման այլ նպաստներ հոդվածը անհրաժեշտ է ավելացնել 21,0 մլն դրամով՝ սոցիալապես անապահով ընտանիքներին և զոհված զինծառայողների ընտանիքներին աջակցելու նպատակով:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում և ծախսերում առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները.

2022 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքների ավարտից հետո պայմանագրերով հատկացված սուբվենցիաների չօգտագործված մասը Արարատի մարզպետարանի հետ կնքված համաձայնագրերի հիման վրա նվազեցվել է և անհրաժեշտ է եկամտային մասում սուբվենցիաներից և ծախսային մասերում կապիտալ աշխատանքներից նվազեցնել 11184,5 հազար դրամ:

Նոր Կյուրինի մանկապարտեզի և դպրոցի, Մասիս քաղաքի ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման աշխատանքների համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 4707,28 հազար դրամ:

Մասիս քաղաքի 3-րդ թաղամաս թիվ 16 շենքի բակի բարեկարգման լրացուցիչ աշխատանքների համար անհրաժեշտ է 870,0 հազար դրամ:

Հովտաշատ գյուղի ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների համար անհրաժեշտ է 870,0 հազար դրամ:

Նոր Կյուրին գյուղի դպրոցի ջեռուցման համակարգի անցկացման լրացուցիչ աշխատանքների համար անհրաժեշտ է 1067,61 հազար դրամ:

Համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել օդորակիչ, որի համար բյուջեից առաջարկվում է հատկացնել 415,8 հազար դրամ:

Թիվ 1 մանկապարտեզի շերտավարագույրների ձեռք բերման համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 1500,0 հազար դրամ:

Առաջարկվում է բյուջեի ֆոնդային մասի եկամուտները՝ վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումների մասով նվազեցնել 260148,6 հազար դրամով:

Ծախսային մասում՝ ընդհանուր բնույթի վարչական սարքավորումներ հոդվածը նվազեցնել 269 579 290 դրամով:

Ստորև ներկայացվում է ծախսերի վերաբերյալ տեղեկանքները .

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական մասում ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	***Գործառական դասակարգում, նպատակ***	***հոդված***	***Ծախսեր հազար դրամ/***	***Եկամուտներ /հազար դրամ/***
				Եկամուտներ			
1				***Ընթացիկ սուբվենցիա*** *նախադպրոցական կրթության սոցիալական որոշ խմբի 6 երեխաների կրթության ապահովման համար*			*851,400*
2				*Գյուղ նշանակության հողի հարկ*			*-5000,000*
3				*Ոչ Գյուղ նշանակության հողի հարկ*			*-15000,000*

4				*Անշարժ գույքի հարկ իրավաբանական անձանցից*			*-40000,0*
5				*Անշարժ գույքի հարկ ֆիզիկական անձանցից*			*-30000,0*
6				*Գույքահարկ փոխադրամիջոցներից ֆիզիկական անձանցից*			*-130000,0*
7				*Տեղական վճար աճուրդների մրցույթների մասնակցության համար*			*-11000,0*
8				*Մանկապարտեզների մատուցած ծառայության դիմաց ծնողական վճար*			*-30000,0*
9				***Ծախսեր***			
10	**11**	**1**	**2**	*Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել / Նույն թվում ֆոնդային բյուջե հատկացումները՝ 260148,6հազար դրամով/*	4891	-284883,60	
11	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Փոստային ծառայություններ հոդվածը ավելացնել	4214	600,00	
12	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Հատուկ նպատակային նյութեր հոդվածը ավելացնել	4269	3135,00	
13	**10**	**7**	**1**	**Սոցիալական հատուկ արտոնություններ.** Այլ նպաստներ հոդվածն ավելացնել սոցիալապես անապահով ընտանիքներին ևգոհված զինծառայողների ընտանիքներին աջակցելու նպատակով	4729	21 000,000	
				Ընդամենը		***-260 148,60***	***-260 148,60***

2022 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների և ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի եկամուտները և ծախսերը կնվազեն 260148 600 դրամով :

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի ֆոնդային մասում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	***բաժին***	***գլուխ***	***դաս***	***Գործառական դասակարգում, նպատակ***	***հոդված***	***Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/***	***Մուտքեր /հազար դրամ/***
1				***Կապիտալ սուբվենցիաները նվազեցնել***			***-11184,50***
2				***Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե նվազեցնել***			***-260148,60***
3	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** «Վարչական սարքավորումներ» հոդվածը նվազեցնել	5122	-269579,290	

4	**01**	**1**	**1**	**Օրեսդիր և գործադիր մարմիններ**. Օդորակիչի ձեռք բերում	5122	415,800	
5	**04**	**3**	**2**	Այնթապ համայնքի ցածր ճնշման գազատարի կառուցում /սուբվենցիայի նվազեցում/	5112	-498,50	
6				Նոր Կյուրինի մանկապարտեզի, դպրոցի, Մասիս քաղաքի ՄՊՄԿ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման աշխատանքների համար	5112	4707,28	
7	**04**	**5**	**1**	Նորաբացի ճանապարհների կառուցում /սուբվենցիայի նվազեցում/	5112	-30,00	
8				Մարմարաշենի ճանապարհների կոպճապատում /սուբվենցիայի նվազեցում/	5113	-10562,80	
9	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.** 3-րդ թաղամաս թիվ 16 շենքի բակի բարեկարգման լրացուցիչ աշխատանքներ	5113	870,000	
10	**06**	**3**	**1**	**Ջրամատակարարում.** Հովտաշատ գյուղի ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում /լրացուցիչ աշխատանքներ/	5113	870,000	
11	**07**	**6**	**1**	Հովտաշատի պոլիկլինիկայի կառուցում /սուբվենցիայի նվազեցում/	5112	-93,20	
12	**09**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Թիվ մանկապարտեզի համար շերտավարագույրների ձեռք բերում	5122	1 500,000	
13	**09**	**2**	**2**	**Միջնակարգ ընդհանուր կրթություն.**Նոր Կյուրին գյուղի դպրոցի ջեռուցման համակարգի անցկացում /լրացուցիչ աշխատանքներ/	5113	1 067,610	
				Ընդամենը		***-271 333,100***	***-271 333,100***

2022 թվականի բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունների արդյունքում ընդհանուր եկամուտները և ծախսերը կնվազեն 271 333 100 դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ